դրութեան մէջ: Մենք հրեշտակների հետ չենք ապրում. մենք գազանների հետ ենք ապրում. պէտք է մարդ վազել գիտենայ, երբ պատահում է փախչել եւ արագաշարժ ոտնէր ունենայ, երբ կամենում է բռնել:

Միայն սպարտական կեանքով ապրող մի հասարակութեան ներկայացուցիչը կարող էր ռեսի նման գնահատել մարմնամարզութեան առողջարար, կենդանացուցիչ եւ հոգին, միտքն ու մարմինը կազդուրիչ նշանակութիւնը, կարող էր հասկանալ եւ նրա նշանակութիւնը կեանքի պատահարների դէմ մաքառելու մէջ:

Թէ՛ ռեսի, թէ՛ քահանայի հայեացքների մէջ եւ թէ առհասարակ նրանց դատողութեան բոլոր ձեւերի մէջ՝ խիստ ակներեւ կերպով երեւում էր իրանց սիրած վարժապետի ազդեցութիւնը: Այդ մարդիկը բոլորովին այլապէս էին վերաբերւում կեանքին եւ նրա պահանջներին, քան թէ՝ որքան պատահել էր ինձ լսել հայ շինականի դատողութիւնը:

Զարմանալին այն էր, որ մեզ մօտ գտնուած միւս գիւղացիներն եւս բաժանում էին ռեսի հայեացքները: Կեանքի անհրաժեշտութիւնները կարծես, ամէնի համար պարզ էր: Իւրաքանչիւրը ցանկանում էր իր զաւակին այնպէս պատրաստուած տեսնել, որ նա աշխարհի մարդ լինէր եւ նրա հարուածների տակ չընկճուէր, չխորտակուէր:

Սրահում լսելի եղաւ ուրախաձայն աղաղակ.

— Բարո՜վ, Աբգար ախպար, բարո՜վ...

— Եկաւ վարժապետը, — ասաց ռեսը նոյնպէս ուրախանալով:

Մեր ամէնքի աչքերը դարձան դէպի դռները: Ծիծաղելով ներս մտաւ մի բարձրահասակ, յաղթանդամ, ուրախադէմ երիտասարդ, անփոյթ կերպով անցաւ սենեակի միջով, ձեռքի երկար նիզակը դրեց մի անկիւնում եւ ապա մօտեցաւ մեզ: Իր հագուստով չէր որոշւում նա միւս լեռնաբնակներից, նոյնպէս կուրծքը կիսաբաց, բազուկները հոլանի, թաղիքեայ երկաթագամ տրեխները հագին, գլխի քոլոզը փաթաթած գոյնըզգոյն թաշկինակներով, եւ նրանց տակից արձակ թողած երկայն մազերը ծածանւում էին մերկ պարանոցի վրայ: Որքա՜ն աշխատել էր նա նմանուել այն հասարակութեանը, որի հետ գործ ունէր:

Նա նայեց մեզ վրայ, եւ նրան տիրեց մի տեսակ շփոթութիւն... Ոչ սակաւ շփոթուեցանք եւ մենք... Բայց իսկոյն զսպելով իրան, ձեռքը մեկնեց նա Ասլանին, ասելով.

— Այս գիւղի վարժապետը՝ Աբգար Ոստանիկ: